ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, բ.գ.թ.
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտ

ԱՇՈՏ ԱՎԴԱԼՅԱՆ. ՎԵՐԱԾՆՎՈՂ ՏԱՂԵՐԳՈՒՆ*

Բանալի բառեր. - *Աշոտ Ավդալյան, քնարերգու, Նավասարդ, Հիշատակի զարդատուփ, լեզու, աշխարհայացք, պոետիկա*

Աշոտ Ավդալյանը նախորդ դարի 80-ականներին հրապարակեց երկու ժողովածու՝ 1980-ին՝ «Նավասարդ», 1984-ին՝ «Արծաթե օր»: Ջաջուռցի այս «թուխ տղան» իր կարճ երկրային կյանքում վերապրեց բանաստեղծության շնորհը՝ բառերը վերածելով հաղորդության ծեսի, ծեսը՝ բառերի կարգի, որ բառ չէ այլևս, այլ՝ ձայնապատկեր, մեղեդուց ծնված տեսիլք: Ահա ինչու Ավդալյանի պոեզիայում զարդանախշը պատկեր է, պատկերը՝ զարդանախշ, որ ինչքան իրական է, գույների հողեղեն լավա և ծավալվում է բնության գույներով, այնքան երկնային՝ տարրալուծված հնչյուններով, որ ոչ թե բառը, այլ բառի ոգուն է ունկնդրում: Ուստի Ավդալյանի պոեզիան գոյության ծես է, որ խարիսխ է փնտրում գոյության պայծառակերպության տեսիլքում, ինչպես զարդանախշն է բառի հաղորդվում բառին, որի ծնունդը և վախճանը մեղեդու ալիքների մեջ է ծավալվում, հարության կանչով աղերսում օրվա սկիզբը և ավարտը, որն ավարտ չէ, այլ՝ սկզբի և վերջի հավերժություն: Այդպես է սկիզբը փոխակերպվում Նավասարդի «հնօրյա ծեսի», օրն արծաթե՝ օր զարթոնքի, որ, իբրև ձայն՝ խմբերգ է հյուսում, իբրև պատկեր՝ որմնանկար:

Աշոտ Ավդալյանի բանաստեղծական ժառանգությունը մեծ չէ: Ընդամենը երեսունյոթ գարուն ապրեց բանաստեղծը, որ ճակատագրով նույնն է Տերյանի հետ, ով չբոլորեց անգամ երեսունյոթը, բայց, ինչպես ասում է Հակոբ Մովսեսը, Ավդալյանը «մի գիրք հասցրեց թողնել՝ «Արծաթե օր» փոքրիկ ժողովածուն, իսկ մինչ այդ գրած նրա բոլոր

* *Հոդվածն ընդունված է տպագրության 12.07.2020 թ.:*

բանաստեղծությունները դրա նախապատրաստությունն են, հետագայում նրանից ստվար մի ժողովածու ստանալու նպատակով, այս գիրքը ցրվեց նրանում մինչև այդ տպագրված ու անտիպ բանաստեղծությունների մեջ»[1]: Մովսեսը նաև հավելում է, թե պետք է «ուղղել այդ կոպիտ սխալը և այդ ժողովածուն միշտ հրատարակել առանձին»[2]: Բայց պետք է հաշվի առնել մի բան: Այնուամենայնիվ, «Նավասարդ» (1980) ժողովածուին նախորդում է «Արևանթեմ» անտիպ ժողովածուն, հաջորդում «Երկրատես» (1988), «Կյանքից դեպի կյանք» (1997) և «Հիշատակի զարդատուփ» (2005) ընտրանիները, որոնցից վերջին երկուսը կազմել է Հրաչյա Թամրազյանը, որոնք ունեն ներքին համակարգվածություն, աշխարհայացքի և պոետիկայի միասնություն: Ուստի հարցադրումը, որ կարող է գրապատմական առումով հնչել, այն է, թե Ավդալյանի պոեզիան ինչ էր հավելում նախորդ դարի 80-ականների պոեզիայի համակարգում: Կարելի է ասել թերևս. այն «երկրատեսի» եկած բանաստեղծի հայացքն է բանաստեղծության մաքուր սկիզբներին, երբ «արեգակը ասեղնակար է տալիս դաշտերին»[3], ներշնչանքի մանուկն է ծնվում, ինչպես օրն է ծնվում, «լույսը հողին մոտենում աստծո պես մտացրիվ» (20) և «հորինում հիշողության որմնանկար» (39): Իսկ սա նշանակում է. «արևանթեմը»՝ արևի ծաղիկ, Նավասարդի կոչնակն է՝ տարփանքի հնօրյա բանաստեղծական ծես, ուր «քնած է ուժը հոգու», քնած է և երգը, որ «լույսի ակոսներում մերկացավ», վարարեց ու «չհասավ արարչագործ արբունքի»[4]: Արեգակն այսպես «բանաստեղծության քայլով մոտեն(ում) // աշխարհին, հողին» (Ն, 6), ցրում է լույսի ալիքները ծեր, հղանում բերկրանք, սրտի համար սեր, տիրանում հողին, իսկ՝

Քառասուն աղջիկ արևը գրկած
Տաք ստինքները սեղմեցին հողին,
Եվ հողը տեսավ իր կրծքի վրա
Քառասուն մանուկ ու մի արեգակ: (Ն, 12)

Հողն այդպես է շիկնում մանկան հայացքից, մանուկները ժպտում հողին՝ նայելով երկինք: ճառագայթները պարում են աղջկա պես ան-

1 Հակոբ Մովսես, Գրառումներ 3, Երևան, 2018, էջ 23:

2 Նույնը, էջ 23:

3 Աշոտ Ավդալյան, Արծաթե օր, Երևան, «Սով. գրող.», 1984, էջ 7 (այսուհետև մեջբերումներ անելիս տեքստում կնշենք միայն էջահամարը):

4 Աշոտ Ավդալյան, Նավասարդ, Երևան, «Սով. գրող», 1980, էջ 34 (այսուհետև մեջբերումներ անելիս տեքստում կնշենք Ն և էջահամարը):

կաշկանդ և հողը այդպես պատրաստ է ծնել («Ճառագայթները պարում են», 8): Արևը վառվում, վարգում է վերում «ինչպես անսանձ, կարմիր ձի» (Ն, 9), աշխարհը դանդաղ սահում է բանաստեղծի սրտի մեջ, «շոշափում է հողը և հողեղենին» (Ն, 6):

Աշոտ Ավդալյանի պոեզիայում արևերգությունն, անշուշտ, ասոցիատիվ պլանում շաղկապված է Վարուժանի «Հեթանոս երգերի», Մեծարենցի ըղձերգության պատկերային համակարգի հետ: Բանաստեղծությունն ահա ինչու Ավդալյանն ընկալում է իբրև «կենարար լույս», որ հազար կաթսաներով լի եռում է իր մեջ, որ «դառնա գինի՝ հաշիշն արևի»[1]: Երգը ծաղիկ է՝ արևածաղիկ, որ «հեռվից եկած օրերի մեջ է» (Հզ, 27) և «կազդուրվում է բանականությամբ», «հողեղեն է հասկից ավելի», «արեգնային լռություն ունի» (Հզ, 20): Այսինքն, ինչպես Շնորհալին կասեր, «բխումն (է) ի հօրէ», որ «ի լոյս ծագեա»: Բնազանցական նախահիմքի որոնման առնչությամբ, ուստի, Ավդալյանի պոեզիայի աշխարհայացքը նույն կապով է շաղկապված Վարուժանի, Մեծարենցի և Տերյանի պոեզիային, բայց պատկերային համակարգը երկաշխարհային է՝ իրերը գոյության կանչող: Ինչպես Մովսեսն է ասում. «Գոյությունն այստեղ մկրտված է գոյության ավազանում»[2], որը նշանակում է՝ բանաստեղծը մեջտեղ է հանում մի լեզու, երբ «պոեզիան դառնում է արարողակարգ, նրա լեզուն՝ արարողապետ»[3]: Հետևաբար Ավդալյանի պոեզիայում գործողությունը զուտ բառերի ներքին իմաստի շարժում է պատկերում, ուստի, ինչպես Թումանյանն է ասում Տերյանի մասին՝ «պատկերները թույլ են և քիչ, բայց լեզուն՝ մաքուր, զտված և արծաթի զանգի պես՝ հնչուն»[4]: Այսպես գոյությունը հարություն է առնում բառերի մեղեդում, որ, ինչպես Մինասի կտավներում, ասես Ջաջուռի բնանկարի թանձր գույներում, տան կտուրից մեկը արևի ճառագայթը բռնել և երկնքի խորությունն է պեղում... Աշոտ Ավդալյանի բնանկարներն էլ մինասյան կտավի փոխակերպումն է տաղերի, որ բառերի մենանվագը խառնում է երկնային մեղեդուն: Պատահական չէ ուրեմն Մինասի հովանավորությունը և խոսքը նախորդ դարի յոթանասունականներին, երբ հորդորում էր Ավդալյանին շարունակել բանաստեղծություններ գրել, դրանց հրա-

1 Աշոտ Ավդալյան, Հիշատակի զարդատուփ, Երևան, Նաիրի, 2005, էջ 20 (այսուհետև մեջբերումներ անելիս տեքստում կնշենք Հզ և էջահամարը):

2 Հակոբ Մովսես, Գրառումներ 3,Երևան, 2018, էջ 24:

3 Նույնը, էջ 24:

4 Տես Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1952, էջ 63:

պարակելու ջանքը ստանձնելով ինքը՝ մեծն Մինասը (սրա մասին վկայում են հուշագիրները): Ուստի, ընդհանրացնելով միտքը, ասենք, որ Ավդալյանի պոեզիայում տիրապետողը, ինչպես Ալ. Զաքարյանն է ասում Տերյանի մասին, «երանգների փոխակերպվող համանմանությունն է, արտաքին աշխարհի այս կամ այն առարկայի կամ երևույթի հատկանշային բաղդատությունը՝ քնարական անհատի ներքնաշխարհի փոխակերպվող երանգների հետ»[1]: Միայն մի տարբերությամբ. Տերյանի բառը և պատկերը եթե հակադրությունների ոլորտից է միասնության ձգտում, համակարգը ամբողջանում անդարձության ոլորտում, հայտնաբերում իր աշխարհը և կրկին դառնում երկիրը՝ «կարոտ կյանքի և խոսքի», ապա Ավդալյանի բառը և պատկերը հաղորդության է մեկնում, իմաստն իր որոնում խոսքի ոլորտում, որ գոյության տեսիլքն է պայծառակերպում, դարձը մնում անավարտ, պոետական ուղին՝ ամբողջից տրոհված մաս, շրջապտույտը՝ կռահվող, որ տրված էր բանաստեղծական շնորհով անթերի: Ուրեմն, մենք գործ ունենք «բանաստեղծական իրականության» մի ոլորտի հետ, որ, որքան կարևոր է արդի պոեզիայի ուղղություններից մեկի կամ առանձին երանգների քննության հարցի հետ կապված և գրապատմական նշանակություն ունի, նույնքան անքննելի՝ ափսոսանքի և զղջման անունից, երբ այս երկրի օժտված մի աստղանուն, դեռ իր ծագման առավոտը չեկած, մարում է երկնքում: Վահագն Դավթյանն ահա ինչու «Երկրատես» գրքի առաջաբանում ասում է. «Ափսոս, շուտ հեռացավ Աշոտը, չհասցրեց ամբողջանալ...»[2], բայց «Ավդալյանի բանաստեղծություններում ինչ-որ «աստվածաշնչյան» նախնականություն կա, հում կավի բուրմունք, «լույսի անդրադարձումներ կան», «շուշանային մաքրություններ», «տեսիլքային» բեկբեկումներ»[3]: Բանաստեղծն ասես գնալով օրվան ընդառաջ, փակվում է օրվա զգեստների մեջ, որ երգի լուսավոր գահին բազմի «թագակիր Անմեղությանը» («Օրվան ընդառաջ», 4): Եվ իր մենության այս փութանցիկ ժամին ահագնանում է լույսը, որ շրջվում, գնում է երկինք «բազմաբեղուն օր հայցելու»: Եվ լույսի ետևից գնում է նաև բանաստեղծը, որ բերի առավոտների պայծառ գունանկարներ, նվագներ, զարդարի շարժումը կնոջ.

1 Ալմաստ Զաքարյան, XX դարասկզբի հայոց բանաստեղծությունը, գիրք 2, Երևան, 1977, էջ 315:

2 Աշոտ Ավդալյան, Երկրատես, Երևան, 1988, էջ 5 (այսուհետև մեջբերումներ անելիս տեքստում կնշենք Ե և էջահամարը):

3 Նույնը, էջ 4:

Նա գնաց հուշի և պայծառացման մենանվագով-
կանայք ասում են- զարդ ուներ կրծքին,
նա գնաց ցավի և թռչունների երգեցիկ ձայնով,
կանայք ասում են – վիշտ ուներ դեմքին:

Նրան ուղեկցող ծառը նվիրեց խնձորի արյուն,
կանայք ասում են – շատ էր գեղեցիկ,
նրան ընդառաջ գնացող լեռը
իր դեմքն հիշելու մոգություն տվեց –
կանայք ասում են – շատ էր ահարկու,
հյուրընկալելու պատրաստ խաղողը
գինու թովչանքը նրա հետ դրեց –
կանայք ասում են – շատ էր ոգելից: (6)

Բանաստեղծական պատկերների մեջ ներկա են երգեցիկ թռչունները, շնչավոր ծառը, լեռը ահարկու, խաղողը և գինին, որոնք պոեզիայի ոգին՝ բառի պայծառակերպությունն են ոգում: Ուստի բառերը բառեր չեն, այլ՝ հարության, ծնունդի մեղեդի, որ «շատ են գեղեցիկ», ինչպես գեղեցիկ է օրվա ծնունդը՝ առավոտը՝ ասեղնագործված, որ անվան փոխանունն է, ինչպես մանուկը բոբիկ և երկինքը՝ զարդանկար, ում համար նվագածուն երգն իր պիտի հղանա և շուշանածամ պարող աղջիկները ետևից պիտի գան («Մանկան ծնունդը», 6-7): Գունանկարն այս անուն ունի թերևս՝ պոեզիա, որ բառի նախահիմքն է որոնում, որ զնգուն ձայնի մեղեդին ասեղնագործ լցրել է դաշտի մեջ՝ ինչպես մանրիկ ծիծաղ, շուրթերին բանաստեղծի՝ բառերի խաղ, որ օրն է բազմաբեղուն, անունը մանկան, ուստի երգում է.

Ասեղնագործիր մանկան անունը
կանաչ դաշտի մեջ
ու պսակազարդ դափնին մոտեցրու նրա
մազերին:

Նրան տուր ծաղկի գեղեցկությունը,
ծաղկի անունը պահիր երկնքում,
և ծաղկի նման հավիտենության ներսում
սրբացիր: (7)

Այդպիսին է պոեզիան, որ «պտղավորում է մեր ակունքները որպես նոր սկիզբ» (26), անունը նրա շնորհվում է երկնքում, որի ընթաց-

քը՝ բառի շարժումը դեպի «ներս», բանաստեղծը կարող է որսալ գույների խաղով, ինքն էլ ամբողջանալ «հավիտենության ներսում» և՝

ասել- կարմիրը շատ է կամակոր թռչունի ներսում,
ասել – կապույտը շատ է լեզվանի ջրերի ձեռքում,
ասել – ցորենը դեղնակտուց է ու շատ սիրելի,
իսկ սևը՝ լեռան հավիտենության նշանն է միայն …(8)

Եվ միայն բանաստեղծության ռիթմը ընկալելուց հետո կարելի է ասել՝ հնչերգ է սա, որ «»երկինք է նայում ու ձայն կա հողին (8), շշուկը մանկան՝ ասես խմբերգ, շիկնանքով բառերի՝ որպես հայելի հայեցումի, որի ետևից վազում է «ձայնի պատանին»: Խմբերգ է սա նաև, որ ծառի յոթերորդ ճյուղի պատկերը կարող է տալ բանաստեղծին: Ծառն, անշուշտ, գոյության անունն է, ինչպես իր՝ բանաստեղծի գոյությունը՝ սակավախոս, որ «հիշում է ձայնը իր նախորդների»: Յոթերորդ ճյուղի պատկերը՝ գալիքի (անխորհուրդ՝ կասեր Չարենցը), իսկ օրը՝ շնորհապարտ ծառի բողբոջն է պայթող: Ծառն, անշուշտ, կենաց ծառն է՝ գեղեցիկ ու շնորհապարտ, որ մրջյունին օրվա հեքիաթն է պատմում, մեղվին տալիս է բանաստեղծի յամբ՝ երգեցիկ օրհներգ: Ծառն, ահա, արմատը հողում, փթթում է լույսի մեջ և արևից է իր լույսը քաղում, որ խոսքի անունն է, բխումն իր ահա ինչու «դարձել է շարականի ոտք» («Ծառը», 18): Այդպես է Ավդալյանի երգը բանաստեղծության դրկիցը դառնում, ջրերին անվանում որդի, երգում օրերի թագն ու պսակը, օրհներգում այս ավետումը բերող տղային («Ցանկություն», 19): Բանաստեղծի աչքը սակայն շրջված է ներս և սփռում է տաղեր արտասանելու ցանկությամբ, իսկ հետո-ն սպառնում է իրեն «գազանի մտագարությամբ» (Հզ, 47): Սակայն Ավդալյանը ասում է, որ ինքը մեղավոր չէ, որ «ձայնի փոխանորդն է խեղճ, ձայնի հրաշեկ տղան՝ թևերին լույսի, քնաբեր մղձավանջի մեջ և գայթի պիտի հուղարկավորի նման բացակա՝ հորդացող կյանքից, գրչի (գրի) նման սողա «ճերմակ թղթի հավիտենական լռության միջով», ապրի բացակա լույսի, բացակա գրչի անհավատ վազքով՝ գտնելու նախադուռը ներդաշնակության («Եվ ես, ձայնի հրաշեկ տղան», Հզ, 42-43): Ուստի միայն հայցում է, որ կրի հոգին զարդանախշը բառի, քանզի՝

հազար տարով հետ եմ մնացել մեծ Նարեկացուց
և հիմա պետք է բառեր թոթովեմ
աշուն չհասնող այգեպանի պես: (Հզ, 47)

Սակայն հեռացումը դարձի մկրտությունն է նաև, որ շնորհն է բառի «որպես ընծայագիր առավոտի», որն Ավդալյանը, ինչպես ասում է, ընթերցում է ծածուկ, ներշնչվում՝ իբրև վերծանող և չի հանդգնում իբրև նորոգիչ՝ բառին ծառայող («Ի՞նչ ընծայագիր տամ առավոտին», Հզ, 31): Եվ հարց է հղում.

Մի՞թե այսպես եմ ապրելու ես միշտ .
լավ է հեռանամ,
աչքերից հեռու, աչքերս հանեմ: (Հզ, 47)

Այդպես է: Ինչպես ասում է Ավդալյանը, «խորքից պիտի գալ// ու տարածությամբ հագեցնել իրը», ինչպես խոսքի ոլորտից են գալիս, «կյանքից սահում դեպի կյանք» պոեզիան և բառը՝ նրա («Կյանքից դեպի կյանք», Հզ, 50):

Անշուշտ, գոյության նախասկզբից, անգո տեսիլքից, բառերի պայծառակերպության խորհրդով, «արտագրելով գրեր զորավոր» (16), ուր անտեսանելին՝ տեսանելի, տեսիլքը իրական է թվում, ձայն տալիս հայրը՝ ինչպես թռչուն, և անծանոթ, չընթերցված մի էջ է բանաստեղծը,որ հոր ձայնով է պատմագրում («Ուրախության թռչուն», 24): Ձայնն այդպես փոխակերպվում է խմբերգի, պատկերը՝ որմնանկարի, որ բանաստեղծի «ներսի» աչքն է հայում, մեղուն՝ խմբերգում, վերծանում իբրև «կորստյան մոխիր», ձայնի հիշողությունը առասպելաբանում իբրև «հիշատակի զարդատուփ»: Խմբերգն այդ Ավդալյանը այսպես է երգում.

Կորստյան մոխիր,
տուր հիշատակի փոքրիկ զարդատուփ,
որ ես ճյուղերից հորինեմ մահվան երաժշտախումբ,
որ ես երգվեմ ադամամութին ու երեկոյան,
ու թե սրինգ եմ – արծաթաջրվեմ,
ու թե բամբիռ եմ – ոսկով ծուլանամ,
ու թե շվի եմ – հեռավորին գամ,
ու թե փող եմ – մերձավոր ես ինձ: (Հզ, 17)

Ծառը բանաստեղծության՝ այսպես է ծաղկում, լսում բնության նվագները գունանկար, սաղմոսերգում առավոտը՝ ծնունդի ու մանկության, հիշողության գորգն իր հյուսում տեսիլքում գալիքի: Բնազանցական նախասկիզբը բառերի կանչն է հեռվի և մոտի, որ արարչի լույսից, արեգակի ճառագայթից է ծորում և ամեն ինչ նրա ստվերի մեջ է խամրում, նրանով է ճառագայթում: Ավդալյանի ընկալմամբ այս-

պիսին է պոեզիայի իրականությունը, որին երկրպագում, տագնապում ու նրա բարբառն է թոթովում.

Եվ կատարյալը, որ խուլ ցնծությամբ
դարմանում է ինձ,
տալով հրաշքը պատկերելու ձիրք,
անվավեր մի ցավ՝ հպատակվելու
զորավոր ԲԱՆԻՆ,
ու ձայն բարձրացնել ընտրելով հոգին
իբրև կենաց ծառ,
որը դեռ իր իսկ կանաչության մեջ
պատանյակ է մի,
որ ժիր ցնորքով
զգայունություն է քարոզում միայն... (Ե. 158)

Երկրատեսի եկած բանաստեղծը հայցում է ձայների բազմաբեղուն օր, որ քնի ձայների ծաղկող գորգի մեջ, արիանա ծաղկի նման և երբ հայտնվի զարդանախշի մեջ, արգասավոր քնով զարդարի մեղվի բզզոցը, վերադառնա ետ («Ծաղկող գորգ»): Բառերն այդպես են ծնվում՝ «խավարից լույս և լույսից մինչև հույժ տեսանելին», «խավարից լույսը և լույսից մինչև հույժ ըմբռնելին», ուր զորավոր է հողի մեջ նետված ցորենը և բարձրանում է մինչև հրաշքը լեռան, զորավոր է նաև քարի մեջ, ուր տաճարն է քնած և այդ տաճարում քայլում է մի կին («Երկրատես», 177) և «ընթերցված մի գիր է մատները նրա// ու դեռ չգրված բանաստեղծություն» (Ե, 189): Ինչ-որ միտք է պտղաբերում ծառը գույների այս սլացքի մեջ, ինչ-որ ձայն է պտղաբերում՝ իմաստունին հանելով բեմ, իսկ թռչունին հաղորդում գաղտնյաց գիրը՝ բերանացի ասված խոսքի շքեղությամբ (Ե, 200): Բանաստեղծն, ասես, մոտենում է ինքն իրեն, մտքերին իր տալիս է հոգու անստորագիր բազմաձայնություն՝ սպառելու իրեն տրված լույսը, սպասում, որ դաշտին լինի խիստ վերակացու, որ ոչ մի հատիկ ինքնանպատակ չտրվի սիրուն: Բայց բանականության ծառը լքում է իրեն, բանաստեղծի ապավենը լոկ ձայնն է մնում, հրավիրում է աստղերին ճաշի՝ նվիրելու նրանց մտքերի երանգապնակ: Տեսիլքների մի զորաբանակ այցելում է նրան որպես հավատարիմ ճորտ, բայց բանաստեղծը ըմբոստանում է, գրում է անհայտ գրեր (ՇԱ, ԲՈՒ, ԴԱ, ՂԻ), որ վարդի հմայող ձայնն է ցրում (Ե, 219): Իսկ վարդը արարչի անունն է, որ շնոր-

հում է բանաստեղծին զուգերգի ձայն, արծաթե մի օր ջրերի վրա և թե առավոտի, որ երգն իր հյուսում ու չի ավարտվում: Այդ հնչերգից է մատանի հյուսում Ավդալյանը՝ բանաստեղծի պատրանքին կարմիրը խառնելով («Արծաթե օր», 68): Ուստի բանաստեղծը աղերսում է Վարդին, որ մահն է տեսել, եզրակարել կիրակին, հիշատակների փոքրիկ վարդ կարել իր զգեստներին, հուշը շնորհագրել որմանկարին (46) և ասում.

Շռայլիր ինձ զուգերգի ձայն,
հնչերգի մեջ թափառող գույն,
ու անհաշիվ օրերի մեջ թուլացող երգ,
որ կրկնեմ բառեր զույգ-զույգ,
աներևույթ լինեմ պահը վերծանելիս,
ու հնչերգի արդուզարդը
հրամցնեմ եկվորներին,
ուշացածին, տեսանողին ու ծնվողին: (46-47)

Եկվորը այդ ծաղկողն է երանելի, ուշացողը՝ զրուցասեր, տեսանողը՝ այր իմացյալ, իսկ ծնվողը՝ որմանկար առավոտի, որ բանաստեղծի ընկալմամբ համապատկերն է կյանքի, մարդու և աշխարհի: Ահա ինչու բանաստեղծի բառը սոսկ իր ճակատագրի, ես-ի կրողը չէ, այլ՝ իղձերից ծնված ընծա, ձայն՝ մարգարտի մեջ, լույս՝ որ «հյուսում է մեր անունը ոչնչից// պատկերը մեր ջնարակում իր ձայնով» («Լույսը», 55), հառնում նախահոր ձեռքում իբրև ավարտված մի հնչյուն «(Հազար տարուց... 62), հայտնության կանչ՝ «հարության երգ երգելով» («Հայտնության մեջ», 70), որ ժողովում, արթնացումի խմբերգ է ասում մարդուն, խմբերգ ու տաղ, որ ունի ձեռքեր՝ պարզած հողին, պարզած երկնքին («Ժողովումի պահ», 85): Իսկ բանաստեղծը հուղարկավորն է վարդերի, որ տանում է անդարձ բառերին՝ «փշե պսակ ու թաց երկինք նվիրելով», տանում է մենակ և չի ասում, թե կա «դարձի մտապատկեր»: Նրա երգում կա ասես «մեկնումի մարող զուգերգ», որ հանդերձյալից (անցյալ հուշից) լուր է բերում և ծիսական հոգեհանգիստ («Օ՜, վարդերի հուղարկավոր», 80): Սա նման է մի շարժման, որ տանում է բանաստեղծին դեպի «ներս», ուր վաղորդյան բառն է նիրհում, բանաստեղծի հոգու վարագույրը բացում, որ Ավդալյանն անվանում է «շարժում դեպի ձեզ», որ դարձի խոստումն է կրկնաբանում՝ անավարտ դարձի խոստում.

Այդ ես եմ անցնում
անսահմանության ու լույսի միջով՝
թափ տալով փոշին անդրշիրիմյան,
աստղի ընթացքը պահելով իմ մեջ,
ձեզ հրաժեշտ եմ տալիս գիշերով:

Գնում եմ մտնեմ ոգու նախաբեմ,
կրակ կտրելով վարագույրի մոտ,
ինձ մոտ պահելով շրջանակը ձեր,
ինձ մոտ պահելով բառը երկմտող: (Ե, 212)

Ավդալյանի անցումը, ահա այսպես, նման եղավ աչքը թարթող աստղին, որ լուսավորում է մի պահ երկնքի ուղին՝ երգի պատրանքը թողնելով բանաստեղծի շուրթին: Պոեզիայի երազանքի ուղին էր դա, որ թեև անավարտ մնաց, բայց մաքուր, իրական և առասպելական, որ դարձի իր ուղին ունի... Ահա ինչու Դավիթ Հավիաննեսը «Չիլո և Աշոտ, կորած սերունդ» բանաստեղծության մեջ ռեքվիեմ կարդալով իր սերնդի վաղամեռ բանաստեղծներին, Աշոտի երգին է անդրադառնում, երբ ասում է, թե «այս աշխարհից չէր» և «դատում էին (նրան) վերին ատյանում», բայց և՝

...չէին կարողանում խոսքին տիրել,
...կորչում էր անհայտ հեռուներում
և հիշատակ թողնում լոկ գրիչը վարժ...[1]

Սուրեն Աբրահամյան.- գիտական հետաքրքրությունների ոլորտը հայ նորագույն գրականության, քննադատության և տեսության հարցերն են: Գիտական մամուլում հրապարակել է հարյուրից ավելի հոդվածներ, աշխատություններ և մենագրություն: Գիտական երկերի առաջին հատորը՝ «Տեքստ և բնագիր», արժանացել է Նիկոլ Աղբալյանի անվան մրցանակին գրականագիտության գծով:

СУРЕН АБРААМЯН - АШОТ АВДАЛЯН-ВОЗРОЖДАЮЩИЙСЯ ЛИРИК - Поэтическое наследие Ашота Авдаляна невелико.

В многочисленных сборниках , изданных 1980-х годах , Авдалян был признан поэтом лирического духа , поэзия которого имеет метафизический рудимент литературного и исторического значения, анализу которого посвящена данная статья.

1 Դավիթ Հովհաննես, Բանաստեղծություններ (1964-2015), Երևան, 2015, էջ 587:

Ключевые слова: *Авдалян, лирик, Навасард, шкатулка памяти, язык, мировоззрения, поэтика.*

SUREN ABRAHAMYAN - ASHOT AVDALYAN- REBORNING LYRICIST - Ashot Avdalyan's poetic heritage is not very large.

In the large collections published in the 1980s, he was recognised as a poet of lyrical spirit, whose poetry has a metaphysical rudiment of literary and historical significance , the analysis of which this article is dedicated to.

Key words: *Avdalyan, lyricist, Navasard, memory box, language, outlook, poetics.*

REFERENCES

1. Hakob Movses, Grarumner 3, Yerevan, 2018 (in Armenian).
2. Achot Avdalyan, Navasard, Yerevav, 1980 (in Armenian).
3. Achot Avdalyan, Arcate or, Yerevan, 1984 (in Armenian).
4. Achot Avdalyan, Erkrates, Yerevan, 1988 (in Armenian).
5. Achot Avdalyan, Hichataki zardatup, 2005 (in Armenian).
6. Avetiq Isahakyan, Erkeri goxovatsu, ht. 4, Yerevan, 1952 (in Armenian).
7. Davit hovhannes, Banastexcutjunner(1964-2015), Yerevan, 2015 (in Armenian).